

բէն ծննալ մէկ քանի զաւակներն :

1473. ՅԱԿՈՎԲ Գ, որդի Յակոբու Ան-  
հարազատի և կատարինէի Գոռնարոյ ,

ծնեալ յետ մահու հօրն յամին 1473 'ի  
27 օգոստոս, տարի մը միայն ապրեցաւ  
և մեռաւ 1474ին օգոստոսի 26 :

Վ Ե Ր Զ

ՆՈՐԱԳԻՒՏ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՌՈՒԻԲԻՆ Ե ԱՆՅՑ ՎԵՐՋԻՆ ԺԱՄԱՆԱԿԻ

Ազգային օրագրաց ոմանք արդէն ծանուցին բանիրուն գրչով մի՛ Գաղղիոյ մէջ հաստատուած  
լատին լրեւելից կոչուած ընկերութիւնը, (Société de l' Orient Latin). որոյ զլիսաւոր նպատակն  
է Խաչակրաց ժամանակի տեղեաց և զործոց կիրայօք՝ որ և է տեղեկութիւն գտնել և հրատարա-  
կել. որոյ մաս մ'ալ ընծայած է մեր ազգային մատենագրութիւնն՝ մեծ հաստրով մի, Թարգմա-  
նութեամբ և ծանօթութեամբ Տիւրքիէ հայագիտի: Այս տարի իստացուած և Թերևս սկսած  
ալ է տպագրութիւն այս գործոյս Բ հատրին, որոյ գլուխը պիտի բռնէ նորագիւտ Պատմութիւն  
կամ Ժամանակագրութիւն մի Ռուբինեան վերջին թագաւորաց, և մասաւանդ բուն վերջին թա-  
գաւորին Զ Լեւոնի: Այս գործոյս երբ գրուած ըլլալն և ուր գտուին կը ծանուցանէ գտողն Ռոյն-  
սեւս Ռոպեր, զորոյ հրատարակած տեղեկութիւնը կը թարգմանենք, հանդերձ զլիսակարգու-  
թեամբ հին հեղինակին, յորմէ կ'իմացուի պատմութեան բովանդակութիւնը. որ շատ նոր և  
ցարդ անծանօթ դիպուածներ պիտի յայտնէ մեզի, թէ և անհաճոյ և եպերելի գործեր ալ ազ-  
գայնոց ոմանց. սրբ արդ անլուելի ըլլալով պէտք է մնան 'ի յանդիմանութիւն նոցա և նմանեաց,  
և 'ի խրատ ամենեցուն:

Պատմչին զլիսաւոր նպատակն է նախ'իր ժամանակակից և գրեթէ իր տիրոջ՝ վերջին Լեւոնի  
վարքը պատմել մանրամասնաբար. երկրորդաբար՝ անոր նախորդ Լուսինեան թագաւորաց շուրջ-  
քիչ մ'ալ անկէ յառաջ՝ Ռուբինեանց սկզբան վրայօք ճամառուտ կ'անցնի Պատմչին, և այն անփու-  
թութեամբ մեծապէս կը սխալի Լեւոն Գը անորդի և անժառանգ ըսելով. մինչդեռ մեր պատմու-  
թեան մէջ ճանչցուած է ամենէն բազմորդի թագաւոր, և իր զուգակից թագուհին Ալիս-Աննա  
երեք անգամ խեղճի այսինքն ջուրտակ զաւակներ բերած է, որոց հինգն ալ քիչ կամ շատ թա-  
գաւորած են. բայց հեղինակն (Տարտել) կը չիօթէ անոր որդիքն և դստերքը ընդ զաւակաց հօր  
նորա Հեթմոյ. նոյնպէս կը չիօթէ Դ և Ե Լեւոններն ալ: Լեւոնի Ե գերեկից Սոհեր անուամբ մէկն  
ալ արդէն ծանօթ էր և կ'ոմս կ'օտկիտի կարծուէր Շահան անուամբ. սա նոյնպէս Սոհէր կ'անուա-  
նէ, բայց զմակնունն Douleort, որ ստուգելի է:

Որքան ինչդալի է մեզ այս նոր գիւտս յօտար և յանակնկալ գրչէ և տեղւոյ, այնքան տրտմալի  
և ամաչելի է 'ի մերազգեաց մանրամասն գրուած մը շունենալ՝ մեր ամենէն մօտ հարատութեան,  
բաց 'ի Սմբատ Գոռնդատապի անուամբ հրատարակեալ ցամաք և համառօտ պատմութիւնէ կամ  
ժամանակագրութիւնէ մի. և մեծանուն վահրամայ Բարունուոյ ուսմանուր վիպասանութիւնէն, որ  
ճաշոց զբքի մը յիշատակարան մի գտեր ընդլայներ է. և որ որչափ զօվելի է այն արձակ յիշատա-  
կարանի գրուածին և գրողին, այնքան կը բնավիտրացանել վահրամայ մեծ անունը: Եւ որ աւելի  
դիւրին էր, որով և աւելի ամօթապարտ, ոչ որ 'ի տերայցեաց տճով կամ նորհճով բան էր դրած  
է այն աշխարհին արդի և աւելի անօթապարտ մնացեալ վիճակին վրայօք, որոյ աւերակք հարիրաւոր  
բերդից և վանորայից՝ իրենց աչաց առջև աւելի քան զաւելի կ'աւերականան, և անձայն խօսնակ  
ցանկալի արձանագրութիւններն ալ իսպառ կը լռեն: